



Կարգապահական գործ թիվ ԿԳ-17012

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի ապրիլի 04-ի թիվ 55-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/38-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԽՈՐՀԻԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Տարոն Սիմոնյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարգսյանի քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Արշալույս Խողիկյանին (արտոնագիր թիվ 341) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 14.03.2017թ. տրամադրված տեղեկանքի փաստաբան Արշալույս Խողիկյանն ունի 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2016թ. հուլիսից 2017թ. հունվար (ներառյալ) ամիսների համար:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

14.03.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 56-Ա/ԿԳ-17012 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Արշալույս Խողիկյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի

կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

17.03.2017թ-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդի անդամ Տարոն Սիմոնյանին (նիստը նախագահող):

17.03.2017թ-ին գործը ընդունվել է վարույթ և նիստի օր է նշանակվել 04.04.2017թ-ին, ժամը 19:34-ին:

3. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Փաստաբան Արշալույս Խողիկյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդին անհայտ պատճառներով նիստին չէր ներկայացել:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Արշալույս Խողիկյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 16.03.1999թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 03.04.2017թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Արշալույս Խողիկյանը ունի 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2016թ. հուլիսից 2017թ. հունվար (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 14.03.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Արշալույս Խողիկյանը իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 04.04.2017թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 03.04.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Արշալույս Խողիկյանի (արտոնագիր 341, ստացված՝ 16.03.1999թ.) նկատմամբ 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում 4 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ անդամավճարի պարտք ունենալու մասով: 28.09.2015թ. թիվ ԿԳ/110-Ա որոշմամբ Արշալույս Խողիկյանն անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է պատասխանատվության նկատողության, իսկ 16.10.2015թ. ԿԳ/150-Ա որոշմամբ՝ խիստ նկատողության ձևով: 03.03.2016թ. թիվ ԿԳ/49-Ա որոշմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար Արշալույս Խողիկյանն ենթարկվել է պատասխանատվության տուգանքի ձևով՝

10.000 ՀՀ դրամի չափով, իսկ 06.10.2016թ թիվ ԿԳ/120-Ա որոշմամբ ենթարկվել է պատասխանատվության տուգանքի ձևով՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արշալույս Խողիկյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև փաստահինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ Ամենամյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Արշալույս Խողիկյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից տրամադրված տեղեկանքներով: Ավելին, կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ նա շարունակել է խախտել վերը նշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լսվելու ժամանակ էլ վերը նշված խախտումն առկա էր: Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում նաև, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ փաստաբանը նախկինում նմանատիպ խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հայաստանի

Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց ՝

1. Փաստաբան Արշալույս Խողիկյանին (արտոնագիր թիվ 341) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Արշալույս Խողիկյանի (արտոնագիր թիվ 341) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 25.000 ՀՀ դրամի չափով:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արշալույս Խողիկյանին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Տարոն Սիմոնյան